զաքս և երթիցեն 'ի բաց, եւ հեռացուցեն զմարքիզն 'ի Տիւրոսէ։ Եւ ինքն ընդ եղբօր իւրոյ Մէլիք Ատիլայ էջ յԱկաղոն, և պաշարեաց զքաղաքն։ իսկ Լատինք եւուն զայն 'ի փրկանս թագաւորին իւրեանց։ Ելին և մեկնեցան անտի, որոյ բազում աշխատութեամբ տիրեալ էին վաստակեալ ամս իբր 30։ կորուսանելով զրաղմութիւն զինուորս և զինչս ամրացուցեալ զնա յամենայն կողմանց։ Յետ այնորիկ էառ Սուլթանն զՌէմլէ, զԲեթզեհէմ և զԲերրոն, և նստաւ անդ մինչեւ յանձն արարին զամրոցն Տարուսմայ Նաթրոնի և Պէյթ Ճիպրէլի։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Առումն Երուսաղէմի 'ի Սալահատինէ եւ զանազան անցք նորին։ Տուն Յովակիմայ եւ Աննայի։ Տաճար Ս. Յակոբայ։ Դաշնագիր Սալահատինի, այլովքն հանդերձ։

ՍԱԼԱՀԱՏՏԻՆ որ այսչափ յաղթահարեալ տագնապեցոյց զԼատինս, խորհէր տակաւին հարկանել եւ վիրաւորել զնոսա 'ի սիրտ և 'ի հոգի, և խսպառ ջնջել և հեռացուցանել յերկրէն Պաղեստինոյ։ ուստի 'ի ձեռն լրտեսաց ծանեաւ թէ ո՛յք ոմանք մնացեալ էին յԵրուսաղէմ, եւ ո՞րպիսի զօրութիւն նոցա, և թէ ո՛րպէս իշխանք և ասպետք և Պատրիարգն կղերականօք պաշարեալ յերկիւղ և 'ի տրտմութիւն, խորհէին դտանել զելս իրաց։ և եկեալ բազմութեամբ զօրաց յաւուր կիւրակէի, էջ յարեւմտեան կողմն քաղաքին, և առաքեաց պատգամաւորս առ ամրակոնս եղեալ առաջի նոցա զպէսպէս պայմանս։ զի տացեն զքաղաքն, եւ զերծուցեն զնա 'ի վտանգէ պաշարման։ բայց քրիստոնեայք մերժեցին զպատգամս նորա և ոչ ընկալան, և սկիզբն եղեւ պաշարման քաղաքին սրբոյ։ ըղհիւսիսային և զարեւելեան կողմանս քաղաքին սահմանեաց լինել նպատակ յարձակման։ Լատինք եւս պատրաստեցան 'ի Ներքուստ, 60,000 զօրս կացուցին 'ի ներքին կողմն քաղաքին ընդդէմ բանակին այլազգեաց, և իշխան քաղաքին